6 փետրվարի 2020 թվականի N 105 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի N 2375-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 1-ի «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Սարալանջի գյուղական համայնքի վարչական սահմանների նկարագիրը հաստատելու և Սարալանջի գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերն անհատույց սեփականության իրավունքով համայնքին փոխանցելու մասին» N 2375-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը՝

1) որոշման 3-րդ կետի «ա» ենթակետում «16.89» թիվը փոխարինել «16.75» թվով.

2) N 4 հավելվածում՝

ա. «Գյուղատնտեսական» տողում՝ «որից չմասնավորեցվող» սյունակի «9.86» թիվը փոխարինել «9.72» թվով,

բ. «Ընդամենը» տողում «16.89» թիվը փոխարինել «16.75» թվով.

3) N 5 հավելվածում՝

ա. «502-001» կադաստրային ծածկագրով տողի «0.31» թիվը փոխարինել «0.17» թվով,

բ. «502-001» կադաստրային ծածկագրով տողից հետո լրացնել նոր տող՝ հետևյալ բովանդակությամբ.

502-001-01	0.14						

:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2020 թ. փետրվարի 7
Երևան